Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«15» նոյեմբերի 2016 թ.
Պետական գրանցման համարը 1041685

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«09» նոյեմբերի 2016 թ. N 135 -Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 10-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի «Սելեկցիոն նվաճումների փորձաքննության և տնտեսական օգտակարության փորձարկումների գնահատման փորձագիտական խորհուրդ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 10-Ն հրամանի թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Հ. Հակոբյանին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ՄԽՈՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2016 թվականի նոյեմբերի 9-ի
N 135-Ն հրամանի

«Հավելված թիվ 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2011 թվականի փետրվարի24-ի
N 10-Ն հրամանի

Կ Ա Զ Մ
ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Կ. Աղաջանյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ)
Վ. Ավետիսյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի պետ (խորհրդի նախագահի տեղակալ)
Հ. Հակոբյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (խորհրդի անդամ)
Մ. Ավանեսյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (խորհրդի անդամ)
Կ. Ադամյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)
Ն. Մելքումյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր սերմնաբույծ (խորհրդի անդամ)
Ա. Ղույյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի վարիչ (ըստ անհրաժեշտության)

Ա. Գույան Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
Շուշիի մասնաճյուղի ագրոնոմիայի
և ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչ,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր (ըստ անհրաժեշտության)

Գ. Սահակյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի
բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի
գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար)։»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ***Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ***